

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՄԽԻԹԱՐԵԼՈՒ ԿԱՐԻՔԸ.

Ի դուր չեն մեր խնկելի հայրերը իրենց հոգեբուդիս-
օրհներգներում տառապանքի ծովերը կարող, անցնող նա-
հատակ հայ ժողովրդին նոր Իսրայէլ անունը դրել:

Նոյնքան թափառական, նոյնքան ցիր ու ցան, էլ աւելի
խուժադուժ հրոսակների, մարախից աւելի շատ ցեղերի
հալածանքներին ենթակայ Թորգոմայ տան զաւակները,
ի սփիւռս աշխարհի են ցրուել զաղթականի ցուպը ձեռքն
առած խնկելի հայրերի ծննդավայրը թողած, տար աշխարհ
աղի արցունքով մեկնել:

Եթէ հին Իսրայէլը մի-երկու անգամ է գերութեան
անլոյս աշխարհում իւր սիրեցեալ Երուսաղէմի գովք-
տենչի սաղմոսը երգել, Արևելքի մեծ նահատակ Նոր Իս-
րայէլը բազմեցս է գերուել, դարեր օտարի լծի տակ հիւծուել
ու հայրենի երկրի սրբավայրերի, Հայութեան Մեծ Օջախ
ս. Էջմիածնի կարօտի մրմունջները յօրինել:

Սակայն եթէ Ենովայի հզօր Ոգու ներշնչմամբ մար-
գարէների Բահադի երկրպագու հին Իսրայէլին մի կողմից
տառապանք ու տարագրութիւն են սպառնացել, անօրէ-
նութեան և անարդարութեան ճանապարհին կանգնած ժո-
ղովրդին պատիժներ են սպառնացել, միւս կողմից նոյն
այդ ժողովրդի վերածնութեան ախոյեան ջատագովները
լքուած, յուսահատուած գերի Իսրայէլին վերակենդանաց-
ման միջիթարանքի խօսքն են ասել:

Ո՛չ չար սրտի, պատժող ոգու կործանիչ ոգին է
նրանց գրգել ժողովրդի գլխին Երկնքի ցասումը կարդալու,
այլ մեղաւորի դարձի գալու, կրկին ճշմարտութեան, ար-
դարութեան ուղին բռնելու սրտալի մեծ ցանկութիւնը:

Սիրելի հայրենիքից վտարուած ժողովրդի հոգու դառ-
նութեան ժամին մարգարէն միջիթարանքի խօսքն է ասել,
յուսահատ սրտերին վերակենդանութեան ոգին ներշնչել:

Եթէ հին Խորայէլը իւր յանցանքի համար գերութեան անարգ լծին արժանանալով այնուամենայնիւ մխիթարանքի տաք խօսքն է լսել, յուսադրութեան քարոզին է ունկնդիր եղել, որչափ առաւել Աւետարանի լոյսը քարոզելուն համար սովի սրածութեան մատնուած հայ նահատակ ժողովուրդն արժանի է ալդ մխիթարանքին, այդ գօտեպնդիչ խօսքին, վաղուայ ծագող արևի յուսատու համոզուած քարոզին:

Տառապանքը լեռնացած, վիշտը ովկիանոսից ընդարձակուած, ցաւը հազար ու մի գլխանի պատել են Արեւելքի ժողովրդներին Փրկչի Սիրոյ խօսքերը քարոզող ժողովրդին. աւեր երկրում անլուր տառապանքը անօրինակ հեղեղումներով է ողողել հայ մարդու սիրտը. և էն որ հայն է, որի սրտից արիւն չի կաթում, էն որ մարդն է, որ զարհուրանքի դողով չէ պաշարուած, որ որդին սիրասուն ծնողների անարցունք լացից չէ քարացած:

Ձկայ անկորուստ տուն, չքանդուած օջախ, չկործանուած շիրիմ:

Եւ ի՞նչ նիւթական ոյժով կարելի է անվերադարձ փնտրել և՛ լրացնել, որ ընկերութիւնը կարող կլինի իւր բոլոր ոյժերը լարելով հայ ահաւոր վշտի գիշերուայ մէջ լոյս սփռել:

Ձկարծենք թէ միայն դրամով, նիւթով մեր ժողովրդին կարող կլինինք օգնել. նրա վիշտը շատ է մեծ, նրա կորուստը շատ թանգ, նրա թախիժը շատ խորը:

Մխիթարանքի, յուսադրութեան կենսալի խօսքը ևս պիտի հնչէ ուժգինս մեռելոց ծովերը իւր ետեր թողած ժողովրդի ականջին:

Աւետարանի Մեծ Վարդապետի հոգեշունչ խօսքը ուժգինս հնչեցնելու կարիքն է իշխում այժմ:

Եւ ո՞վ աւելի քան հայ հոգևորականը բարոյական պարտք ունի իւր ցնցոտիներում պալուլուած, փշուր հացի կարօտ, սիրուն հայրենիքի կարօտով հիւժուող եզրայրակցին ի սիրտ ժողովրդեան խօսելու, մխիթարութեան զգայուն քարոզը ասելու, յուսահատ ժողովրդին վերաշինուող հայրենիքի յոյսը ներշնչելու:

Տառապանքի բեռը շալակած ժողովուրդը մխիթարան-

քի խօսքի է կարօտ և հայ քահանան է, որ եկեղեցու ամբիոնից պիտի այդ խօսքն ասէ, սրտալի, ոգեշունչ, պիտի ասէ համոզուած, որ, յիրաւի, այդ խօսքը մեծ արժէք ունի և նրա կարիքն աւելի քան զգալի է:

Կենդանի խօսքի պահանջն է ունեցել նա և այսօր առաւել քան երբ և է այդ պահանջը հայ: Հացի սովը չէ սոսկալին, այլ ոգու սովը, որի առաջ և ոչ մի նիւթական ոյժ չի կարող առնել:

Զթողենք ոգու սովն իշխէ մեր անբախտ ժողովրդի մէջ, թոյլ չտանք, որ ս. նախահայրերի ոգեշունչ օրհներգը լռէ:

Հայ հոգևորականի վրայ է ծանրանում ամենից առաջ ոգու սովի դէմ մաքառելու ծանր պարտքը: Ու թող ելնէ բեմ, նոր Իսրայէլի նոր մարգարէն դառնայ, մխիթարանքի կարօտ ժողովրդին Ս. Գրքի ոգեբուղի խօսքերը քարոզէ պարզ, մեկին ու սրտալի:

Ժամանակը կենդանի խօսքի պահանջն է դրել Հայ հոգևորականի առաջ և նա պարտաւոր է կատարել այդ բարեխղճութեամբ, սիրով ու այն մեծ հաւատով, որ, յիրաւի, իր խօսքը տառապող ժողովրդի գօտեպնդման, արիացման կծառայէ, որ, յիրաւի, շատ սգաւոր սրտեր կմխիթարուեն, շատ լքուած հոգիները կվերածնուեն:

«Մխիթարեցէք, մխիթարեցէք զժողովուրդ իմ, ասէ Աստուած»:

Ահա ինչ է հնչում հայ հոգևորականի ականջին, անհրապարհ սիրուն պարտիք է դրւում նրա վրայ:

Ու նա պէտք է իւր պարքը կատարէ. նա պարտաւոր է իւր կոչման տէրը լինել, իւր ահաւոր երգմանը հաւատարիմ մնալ:

Մխիթարանքի խօսքի կարիք է ծառացած մեր առաջ. եւ մենք պարտք ունենք այդ կարիքը լիովին սրբութեամբ լրացնելու:

«Քահանայքդ խօսեցարուք ի սիրտ ժողովրդեան և մխիթարեցէք զնա»: